

# ԵՐԵ ԴԱՐՁԵԼ ԵՔ ԱՎՏՈՎԹԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ, ԿԱՄ ՆԿԱՏԵԼ ԵՔ ՄԵՔԵՆԱՅԻ ՎՆԱՍՎԱԾՔ, ԱՊԱ.

## ՊԱՏԱՅԱՐԻ ՎԱՅՐՈՄ



### ՔԱՅԼ 1



Մի տեղաշարժեք մեքենան և կապվեք մեր մասնագետների հետ. +374 10 700 800



Ձեռքի տակ ունեցեք մեքենայի տեխնիկական անձնագիրը և Ձեր վարորդական վկայականը:

### ՔԱՅԼ 2

Կատարեք մեր մասնագետի ցուցումները, որոնք կարող են լինել.



Մեքենան թողնել անշարժ վիճակում, չտեղաշարժել և լուսանկարահանել մեքենայի դիրքը, վնասված հատվածները, եթե ներգրավված է այլ մեքենա, նկարել այդ մեքենան ևս՝ այնպես, որ երևան մեքենաների համարանիշները:

Լուսանկարները հաղորդակցության բջջային հավելվածների (whatsapp, viber, telegram) միջոցով ուղարկել մեր մասնագետներին դեպքի վայր այցելելու նպատակահարմարությունը գնահատելու համար:



Սպասել մեր մասնագետի ժամանմանը, կամ շարունակել երթևեկությունը, եթե դեպքը սպասարկվել է հեռավար:

Մեր մասնագետի ցուցման դեպքում կապ հաստատել Պարեկային ծառայության կամ ճՈ հետ, հրավիրել դեպքի վայր և արձանագրել պատահարը:



Եթե կան պատահարի այլ մասնակիցներ, արձանագրել վարորդի տվյալները:

## ՊԱՏԱՅԱՐԻՑ ԶԵՏՈ

Ձեզ կցագրված սպասարկողը կապ կհաստատի Ձեզ հետ և կներկայացնի հաջորդ քայլերը, որոնք կարող են լինել.



- 1** Ներկայացնել հատուցման առցանց դիմում, կամ մեր կողմից կազմված դիմումը ստորագրել (ներառյալ՝ էլեկտրոնային),
- 2** Հատուցման որոշման համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի հարցում և հավաքագրում, ներառյալ՝ ճանապարհային Ոստիկանության կազմած արձանագրությունը,
- 3** Մեքենան մոտեցնել մեր գրասենյակ վնասների ավելի մանրամասն գնահատման համար, կամ պայմանավորվել մեր մասնագետի հետ Ձեզ հարմար վայր մոնենալու համար,
- 4** Մեքենան մոտեցնել վերանորոգման կետ վերանորոգումը սկսելու համար:



Հատուցման որոշման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ունենալուց հետո **1-3** աշխատանքային օրվա ընթացքում Ձեր սպասարկողը կտեղեկացնի հատուցման որոշման մասին:

### Հատուցման հաստատման դեպքում մենք կառաջարկենք 2 տարբերակ.

Դրամական հատուցում, որի դեպքում մենք Ձեր բանկային հաշվեհամարին կփոխանցենք գնահատված վնասի չափով հատուցում (սվազեցնելով պայմանագրով սվազեցման ենթակա գումարները),



Վերանորոգում, որի դեպքում մենք կկազմակերպենք Ձեր մեքենայի վերանորոգումը լավագույն վերանորոգողների մոտ հնարավորինս սեղմ ժամկետներում:

